

ԻՐԱՎԱԳԱՆ Մշակույթ

Չկա Հասարակության Թշուշ
անուանյալ իրավաբանական
Սփյուռնի
Ubi societas ibi ius

Երկշաբաթեի
թիվ 8 (11)
2007 թ. հունիսի 30

ԻՐԱՎՈՒՆԵՔ ԵՎ ՄԱՐԳՈՒ ԻՐԱՎՈՒՆԵՐԵՐ

ՍԱԿԻ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ ԲՈՒՈՐԵՑ ԱՃԽԱՏԱՆՔԻ ԱՈՒԱՋԻՆ ՏԱՐԻՆ

Ազգային երկրները պետք է շարունակեն ներդրումները խորհուրդն ուժեղացնելու նպատակով:

«Միավորված ազգերի կազմակերպության Սարդու իրավունքների խորհուրդը բոլորեց աշխատանքի առաջին հիասթափեցնող տարին ընդունելով ընթացակարգային միջոցառումների փաթեթ, որը հիմք է դնում ապագա աշխատանքի համար, բայց ամուր դիրք ապահովելու տեսանկյունից անբավարար է», - նշել է «Մարդու իրավունքների դիտակ» միջազգային իրավապաշտպան կազմակերպությունը (Human Rights Watch):

«Խորհուրդն անպատասխան է թողել առանցքային հարցեր, ինչը գործողությունների ազատություն է տալիս այն երկրներին, որոնք փորձում են թուլացնել մարդու իրավունքների պաշտպանությունը», - ասել է «Մարդու իրավունքների դիտակի» համընդհանուր քարոզարշավի հարցերով տնօրեն Փեգգի Չիքսը՝ ավելացնելով, որ որոշումը հիմք է հանդիսանում խորհրդի աշխատանքի համար, բայց դեռևս շատ անելիքներ կան:

Թեև խորհուրդը որոշումներ է ընդունել Պաղեստինյան գրավյալ տարածքների և Գաբոնի վերաբերյալ, սակայն շարունակում է անտեսել մարդու իրավունքների ուշադրություն պահանջող տասնյակ այլ իրավիճակներ Աֆղանստանում, Կոլումբիայում, Իրաքում և Շրի Լանկայում:

Ընթացակարգային որոշումներն, այնուամենայնիվ, պետք է առնվազն հնարավորություն տան խորհրդին, որ վերջինս կառուցվածքային հարցերից ուշադրությունը տեղափոխի կուտակված հիմնախնդիրների լուծման վրա: Նշենք, որ կառուցողական քայլերն առաջարկել էր խորհրդի նախագահ, Մեքսիկայի դեսպան Լուի Ալֆոնսո դե Ալբան, և դրանք ընդունվել են առանց քվեարկության կեսգիշերից մի քանի րոպե առաջ: Ինչպես տեղեկացնում են, խորհուրդը փակուղու մեջ է եղել ողջ օրվա ընթացքում այն պատճառով, որ Չինաստանը փորձել է լրացուցիչ արգելքներ դնել խորհրդի գործունեության առջև կապված առանձին երկրների իրավիճակների հետ: Խորհրդի կողմից ընդունված տեքստը ներառում է չպարտավորեցնող մի ձևակերպում, որը հորդորում է պետություններին, որ առանձին երկրների վերաբերյալ ներկայացված բանձների առումով ապահովվեն առավել լայն օժանդակություն:

Խորհրդի կառուցողական փաթեթն ընդգրկում է մի շարք բարեփոխումներ, որոնք կապված են խորհրդի մարդու իրավունքների փորձագետների, ՍԱԿ-ի բոլոր անդամ պետությունների՝ մարդու իրավունքների գեկույցների քննարկման գործընթացի և խորհրդի հետագա աշխատանքի օրակարգի հետ:

Խորհրդի «հատուկ ընթացակարգեր» համակարգն ընդգրկում է մարդու իրավունքների 41 անկախ փորձագետներ կամ աշխատանքային խմբեր, որոնք կանադեզ կամ որոշակի ոլորտների, ինչպես, օրինակ, կանադցի դեմ բռնության և կանայական ձեռքբերման, կամ որոշ երկրներում՝ ներառյալ Բիրման և Սուդանը,

Լ Ե Վ Ո Ն Ն Ա Ն Թ

Ժողովուրդները իրենց անկախությունը ձգտելու համար չէ, որ կը մեռնին: Հասարակի ճիշդ է հակուսակը. կը մեռնին ապրելու կամքն ու վճռակամությունը չունենալուն համար: Եթե հայրենիքը դիմացի է այսպես դարձել, իր դիմագրություններն է դիմացիքը. դիմագրելով, որ ապատիվ:

Կուտի մեջ նետուողը է՛ւ կը վիրատուրի, է՛ւ կընայ մեռնիլ: Բայց մեռնելից վախճող ժողովուրդը մեջ կընայ ապրիլ ու դիմանալ, մեջ ալ իրավունք ունի ապրելու, իրեն ուրիշ գոյություն, իրեն ջուկ անհատականություն: Ե՛ւ իր վախճող անհատի մեռնելը, միայն կը

մեռնի քաջքուրդով, Հեռուելով, արձանարձեռով ու ոտքի տակ երթնելով:

Ինչի՞ է նման ամեն արժանիքը զուրկ ու ստորին ազգային գոյություն մը: Արդի ու անույնալ մեր ամբողջ հայրենիքը, մեր ամբողջ ստատուսները, մեր մարդկային արժանապատվության այս ամբողջ լեյնն եթե մեզ կը խմենք, կը խմենք միայն մե՛կ նպատակով, որ դիմագրենք, մարտնչենք, յանձն առնենք ամեն ինչ, մինչև որ հայրենիքը սիրանայ իր բոլոր իրատենքներուն, իր ամբողջական եւ անկախ հայրենիքին:

Տարված «ԵՆԿԱՅԵՈՒԲԵՆԵՆ 29.9.07» հոդվածից



Լ Բ Ա Տ Ո Ւ

Հ Ր Ա Ն Տ Գ Ի Ն Ք Ի Ա Ն ՈՒ Ն Ո Վ

ՍԵՐ ՎԱՐԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐՎԱ ՄԻՋԵՎ ԱՂԱՎՆԱՏԵՍԻԼ ՄԻ ԱՅՐ ԵՐ ԻՋԵԼ՝ ԵՐԿՓԵՂՎԱԾ ՅՈՂՈՎ - ԻՆՔՆ ԵՐ ՈՒ ԻՆՔՆ՝ ԶՈՂՎՓԱՈՒ ԵՐ՝ ՄԵՐ ՀՐԱՆՏ ԳԻՆՔԸ...

Յր. Սարգսյան

Վանաձորի ՅՈՒԿԻ. Թունանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Գուրգեն Խաչատրյանի առաջարկությամբ և բուհի գիտխորհրդի որոշմամբ (2007թ. փետրվարի 28) լրագրության անդրանիկ կուրսի լսարանն անվանակոչվեց «Այս» թերթի հիմնադիր և լուսահոգի գլխավոր խմբագիր Յրանտ Գինքի անունով: Ներկա էին Գինքի այրին տիկին Ռաբելը, եղբայրը Երվանդ Գինքը տիկնոջ հետ, Գուրգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը, բուհի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները:

Գ. Խաչատրյանը նշեց, որ Յրանտ Գինքն իր անձնական օրինակով ցույց տվեց, թե ինչպես կարելի է հայրենասեր լինել: Մեծ հայրենասերն ու մարդասերը պաշտպանում էր մարդկանց իրավունքները՝ անկախ ազգությունից, իր մարտավարության հիմքում դնելով սերը:

Ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին Գինքի հիշատակը:

Յրանտ Գինքի հուշաքարի բացման պատիվը տրվեց տիկին Ռաբելին: Լսարանի համընթաց քաջունից հետո միջոցառումը շարունակվեց բուհի դահլիճում:

«Յրանտ Գինքը կարողացավ ոչ թե ձեռնոց նետել, այլ ձեռք մեկնել. նա հաշտության, երկխոսության կոչ էր անում, սակայն, փոխանակ ըմբռնելու, թուրքերը կտրեցին մեկնված ձեռքը»,- մասնավորապես նշեց գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սելա Սանթրյանը:

Խոսք ասացին «Այս» թերթի հայաստանյան թղթակից Ծովհանր Լոքմազյանը, Ռաբել Գինքը, ուրիշներ:

Ծ. Լոքմազյանը խոսեց Թուրքիայում Յրանտ Գինքի ծավալած գործունեության մասին: Նա բացատրեց Գինքի ազգանվան ծագումնաբանությունը («դինք» նշանակում է ծավալ արպար ըստ):

Լրագրության բաժնի ուսանողների կողմից խոսք ասաց Յայարփի Քոչարյանը:

Տիկին Ռաբելը պատասխանեց դասախոսներին և ուսանողներին հետաքրքրող հարցերի: Նա լսարանին նվիրեց Գինքի գրիչը՝ որպես թանկագին մատուց: Տեղեկացրեց նաև, որ նախատեսվում է Գինքի անվան հիմնադրամ ստեղծել՝ ապագայում թանգարան հիմնելու նպատակով:

Դեկտոր Գ. Խաչատրյանը Ռաբել Գինքին նվիրեց ՅՈՒԿԻ. Թունանյանի հատընտիրը՝ Յրանտ Մաթևոսյանի խմբագրությամբ և գիտական նյութերի անդրանիկ՝ «Բանքեր» ժողովածուն, բանաստեղծ Յրայա Սարգսյանը իր անոթիվ էսպորտը:

Յանդիպման ավարտին քանդակագործ Բոգդան Յովհաննիսյանը կատարեց Գինքի սիրած երգերից:

Յովհաննես ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԻՏԵԼԻՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՐՈՇ ԴԻՄԱԿԱՐՁԵՐ

րոպե «ընդհանուր ճակատով» դասն անցկացնելով՝ ականա հայտնվում են տեղեկատվություն փոխանցողի դերերը, և միշտ չէ, որ հնարավոր է լինում ապահովել յուրաքանչյուր աշակերտի ընդգրկվածությունն ամբողջ դասժամի ընթացքում: Եթե այս ամենին ավելացնենք աշակերտների բացակայությունը և «ընդհանուր ճակատի» պայմաններում յուրաքանչյուր աշակերտի անհատական ընդունակությունների և մատուցվող նյութը միաժամանակ ամբողջ դասարանով յուրացնելու «հրաձայնակարգ», ակնհայտ է դառնում, որ դասընթացի կազմակերպման եղանակի փոփոխության խնդիր ունենք:

Նոր դպրոցի ձևավորումը նախատեսվում է կատարել ուսուցման նոր համագործակցային եղանակով ուսումնառության կազմակերպմամբ:

Ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակը նպատակ ունի բոլոր սովորողների մեջ արթնացնել հետաքրքրություն՝ դասընթացում ընդգրկվելու, մասնակցելու, աշխուժանալու, ինչ-որ դեր ունենալու: Իսկ այս ամենին հասնելու համար ուրիշ փոփոխություններ են անհրաժեշտ դասավանդման մեջ:

Շատ մանկավարժների դժվարանում են հրաժարվել կրթությունը որպես ընդօրինակում ընկալելու մոտեցումից: Դեռևս կան մեծ թվով ուսուցիչներ, ովքեր ընդդիմանում են ուսուցման կազմակերպման համագործակցային եղանակի կիրառմանը դպրոցում՝ այն համախելով օտարաձուլություն:

Լինելով «Հայաստանի պատանեկան նվաճումների» դասընթացի մասնակից, ՀՄԿ-ի «Մարդու իրավունքների հայկական դպրոցի» 9-րդ խորագրված դասընթացի շրջանավարտ և ուսուցանող, Հայաստանի քաղաքացիական կրթության «ժողովրդավարության հիմնարար արժեքներ» ուսումնական ձեռնարկի փորձարկող ուսուցիչ՝ դասավանդման ընթացքում կիրառում են ուսուցման նոր մեթոդներ, գնահատման այլընտրանքային ձևեր:

Այսպիսով, փոխվել է գիտելիքի նկատմամբ պահանջը, և պարզ է, որ գնահատման ավանդական համակարգը բավարար չէ այն գնահատելու համար:

Ներկայումս որդեգրվում են գնահատման նոր մոտեցումներ և մեթոդներ՝ կատարելագործելու համար գնահատման համակարգը, որը, բնականաբար, ենթարկում է մաս գնահատման չափորոշիչների բարեփոխում:

Եթե, ըստ ավանդական համակարգի, գնահատումը նշանակում էր ստուգում,

ապա ներկայումս գնահատումն աշակերտների առաջադիմության վերաբերյալ հաղորդակցության շարունակական գործընթաց է ուսուցիչների, աշակերտների և ծնողների միջև: Այն ուսուցիչ և աշակերտների ամենօրյա գործողությունների անբաժան մասն է կազմում և թույլ է տալիս ի հայտ բերել աշակերտների ուժեղ և թույլ կողմերը, օգնել աշակերտներին նպատակներ սահմանել առաջիկա քայլերի համար: Եթե ի՞նչ համակարգով ուսուցիչները սահմանում են չափորոշիչներ, աշակերտները կարող են չհիմանալ և չհասկանալ գնահատման մեխանիզմները, ապա ներկայումս ուսուցիչները սահմանում են չափորոշիչներ աշակերտների հետ մտտեղ, և աշակերտները հստակ պատկերացնում են գնահատման ձևերը:

Անհրաժեշտ է, որ ուսուցիչը և աշակերտը իրագրվել լինեն գնահատման չափորոշիչներին: Սա թույլ կտա ապահովել ուսումնառության արդյունքների ընդունելի գնահատում: Դրանք շատ կարևոր են, քանի որ աշակերտի ուսումնառության դրդապատճառները մեծապես պայմանավորված են ստացած գնահատականի արդարացիության աստիճանով: Գնահատման դրական արդյունքը մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչ նպատակ է հետապնդում, ինչ է ակնկալում ուսուցիչը գնահատելիս:

Հնարավոր է, որ գնահատականը չարտացոլի աշակերտի իրական գիտելիքները: Այն ոչ միայն չափում է աշակերտի կողմից առարկայի յուրացման աստիճանը, այլև չափում է աշակերտի կարողությունը կիրառելու այդ գիտելիքը գործնականում, այսինքն՝ մենք կարիք ունենք ոչ միայն մտածողների, այլև կատարողների:

Գնահատումը թվանշանների հավաքածու չէ, իսկ նրա նպատակը ոչ թե քննադատելն է, այլ ուսումնական գործընթացը կատարելագործելը, և մենք պետք է գնահատենք մեր նվաճումներն ու ձեռքբերումները, այլ ոչ թե մեր ցանկություններն ու պլանները:

Երբեք չպետք է գնահատել այն, ինչ չենք սովորեցրել, և չի կարելի գնահատել, եթե չգիտենք՝ ինչպես պետք է վերացնել թերացումները և ուղղել սխալները:

Այսպիսով, գնահատականն արտացոլում է աշակերտի գիտելիքների և հմտությունների մակարդակային փոփոխությունները, դրանք կիրառման կարողությունը և կիրառման դրդապատճառների ամբողջությունը, բազմաօժիտելարժեքային, դասից բավարարվածության աստիճանը և ինքնագնահատումը:

տումը: Ինքնագնահատումը, թերևս, գնահատման ամենակարևոր տեսակն է: Գոյություն ունեն գնահատման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են գնահատումը պատասխանների ընտրանքի միջոցով, շարադրանքի գնահատումը, դիսկորման և արդյունքի գնահատումը, հուզական գնահատումը, անձնական հաղորդակցումը՝ որպես գնահատում և այլն: Շատ կարևոր է, որ գնահատման մեթոդը համապատասխանեցվի նպատակին. օրինակ՝ եթե նպատակն էր ստուգելու, թե յուրաքանչյուր աշակերտ որքան գիտի և դեռևս ինչ ունի սովորելու, գնահատումն է ընտրանքի պատասխանով առաջադրանքների միջոցով:

Եթե տրված առաջադրանքով պարզվել է, որ աշակերտները լավ չեն հասկացել վարակատար ներկա ժամանակը, այդ բացը լրացվում է հասկանալուն նպատակով քարտերի օգնությամբ: Եթե ցանկանում ենք ստուգել աշակերտների իմացությունն անգլերենի ուղղագրությունից (կետադրությունից), այն իրականացնում ենք թվադրության միջոցով: Գրավոր աշխատանքը ստուգելուց և գնահատելուց հետո ուսուցիչը հարցող դաս տրամադրում է գրավոր աշխատանքի վերլուծությանը, որտեղ գրավորի արդյունքներն ընդհանուր առմամբ ներկայացնելուց հետո անցնում է սխալների պարզաբանմանը: Գրատախտակին, ըստ տիպի, խմբաբաժնի կազմում ենք թույլ տրված ուղղագրական սխալները և վերիիջելով ուղղագրական կանոններն ու օրինակաբանությունները՝ ուղղում դրանք: Բնական է՝ կլինեն աշակերտներ, ովքեր գրատախտակին զովածից ավելի քիչ կան ավելի շատ սխալներ կունենան: Քիչ սխալներ թույլ տված աշակերտները, զույգեր կազմելով դեռևս շտապով սխալներ ունենող աշակերտների հետ, շարունակում են աշխատանքը: Ուղղելով սխալները՝ նրանք միաժամանակ որոշում են սխալի տիպը, գրում համապատասխան ուղղագրական կանոնը, որի չիմացությունը հետևանքով տեղի է ունեցել սխալը, գրում նմանօրինակ ուղղագրությամբ այլ բառեր և սխալ բառերը ծիշտ ձևով գործածում նախադասությունների մեջ: «Ազատ» մնացած աշակերտները (դա հնարավոր է, երբ սխալ ունեցող աշակերտների թիվն ավելի քիչ է, քան չունեցողներին) օգնում են դժվարացող զույգերին, հատկապես այդ զույգերին, ովքեր, ուղղելով սխալը, չեն կարողանում մշել, թե որ ուղղագրական կանոնի չիմացություն կամ ինչի հետևանքով է տեղի ունեցել սխալը: Չի բացառվում, որ երրորդ աշակերտն էլ դժվարանա: Այստեղ արդեն ականատեսն ենք մի երկրյալ, երբ աշակերտը, որ համոզված էր իր իմացությանն ապացույց, պարզվում է, որ ինքն էլ որոշակի ժժվարություններ ունի (չունի գիտելիքը կիրառելու հմտությունը):

Տես՝ էջ 4

ՃԻՏ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՉԵՎԱԿՈՐՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՈՒՐՄՆԵՐՈՒՄ

Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության մասնաճյուղը Հայաստանում, «Սենտասակների կրթություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում» ասոցիացիան, ՀՀ առևտրաարդյունաբերական պալատը, Լոռու մարզպետարանը, Լոռու մարզի առևտրաարդյունաբերական պալատը և Ջբաղվածության կենտրոնը վերջերս կազմակերպել էին հանդիպում նվիրված Հայաստանի 21-րդ դարասկզբի կարևորագույն երկխոսություններից մեկին՝ կրթության և կարիերայի ոլորտներում:

Բացման խոսք սաաց «Սենտասակների կրթություն և կրթություն ողջ կյանքի ընթացքում» ասոցիացիայի անդամ Գ. Հակոբյանը: Ներկայումս ողջունեց Լոռու մարզպետ Ա. Քոչարյանը: Հակոբյանը ներկայացրեց Լոռու մարզի կրթության, գործարարության ոլորտները և զբաղվածության ընդհանուր վիճակը մարզում: Համահիշման ընթացքում բարձրացվեցին արդյունաբերության, առևտրի, ներկրման և արտահանման բնագավառների բարելավման

համար անհրաժեշտ մասնագիտական կարիերայի պատրաստման, դրանում այսօրվա և վաղվա գործատուների ներգրավման աստիճանի, երկրում մանր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտ իրավական դաշտի ձևավորմանն առնչվող հարցեր: Մասնակիցները իրենք տեսակետներն ու համոզումներն արտահայտեցին նշված հարցերի կապակցությամբ: Երկխոսության կազմակերպիչները համոզված են, որ բարձրագույն կրթության նկատմամբ վերաբերմունքի և քաղաքականության ձևավորումը մեծապես մեծապես պայմանավորված է Հայաստանի կրթության և գործարար աշխարհի տարբեր ոլորտներում այսօր աշխատող անհատներով:

Հանդիպումը տեղի ունեցավ Կանադոյի պետական տեխնոլոգիական քոլեջի դասիչում: Այն կազմակերպվել էր 2007թ. հոկտեմբերին Հայաստանում «Սենտասակների կրթության շաբաթվա» ծրագրի նախապատրաստական աշխատանքների շրջանակներում: Սեփ. կրատվություն

ՄՄՄՈՒԼԻ ԱՋԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՁԼՄՆԵՐԻ ԸՆՏՐԱԲԱՆՎԻ ԺԱՄԱՆԱԿ

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից իրականացվող ծրագրի նպատակը մարզային լրատվամիջոցների և լրագրողների հետ կապերի ակտիվացումն է: Ծրագիրը ֆինանսավորվում է Բաց հասարակության ինստիտուտի Հայաստանի օժանդակության հիմնադրամի և Լիդեռալների թագավորության կախավորության կողմից:

Ծրագրի շրջանակում Երևանի Մամուլի ակումբը և Թիմ հետազոտությունների կենտրոնը մոնիթորինգ են իրականացրել՝ հետևելով մայրաքաղաքի 15, Լոռու (Վանաձորի 3 «Միզ», «Վաբա», «Լոռի», Ստեփանավանի «Ֆորտունա», Սպիտակի «Սլավա Մեդիա», Ալավերդու «Անկլուն գումարած երեք») և Շիրակի մարզի («Ցայգ», «Նոյե-

մի», «Շանթ», «Շիրակ») հեռուստա-ընկերությունների (ՀԸ) աշխատանքներին: Իրականացնող կազմակերպությունը դիտարկման արդյունքները ներկայացնելու և Լոռու մարզի լրագրողների ու դիտարկական կազմակերպությունների կարծիքները լսելու նպատակով Հեյսիմկյան քաղաքացիական ասսոցիացիայի (ՀՊԸ) Վանաձորի գրասենյակում կազմակերպել էր կրթ-սեղան քննարկում «Հայաստանի ՁԼՄ-ների ընտրաշաղկի ժամանակ» թեմայով:

Ներկա էին Կանադոյի զանգվածային լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Տես՝ էջ 3

← էջ 2

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ ԳՐԵԹ ՉԵՆ ԳՈՐԾՈՒՄ...»

Աշոտ Մելիքյանն ու փորձագետ Մեսրոպ Դարոյությունյանը ներկայացրին համարապետական 15 հեռուստառնկերուրությունների աշխատանքը ընդգծելով, որ ԴՆԵՐը հրաժարվեցին լուսաբանել ընտրությունների ընթացքը՝ չսահմանելով սակագին, ասել է նրանք հրաժարվեցին զումար վաստակելու հնարավորությունից:

Աշոտ Մելիքյանը նկատեց, որ համաշխարհային ժուռնալիստիկայում նման դեպք չի գրանցվել: Ըստ նույն աղբյուրի ընտրարշավի ընթացքում առավել ակտիվ էին «Երկիր Մեդիա», «Կենտրոն», «Շանթ» ԴՆԵՐը, որոնք, սակայն, հանրապետական հեռարձակում չեն ապահովում: Նկատելիորեն պասիվ դիրքում էր «Արմենիա» ԴՆԵ: Կոմիտեի անդամները դժգոհ էին անբողջ հանրապետությունում նեղ հեռարձակվող չորս ԴՆԵՐի (Հ1, Հ2, ԱԱ, Արմենիա) աշխատանքից քարոզչական անհավասար պայմաններից. «Դեռուստաթերի միջոցով են մարդիկ կողմնորոշվում, իսկ նշված ԴՆԵՐի հաղորդումներն ավելի շատ ընտրողների շփոթության մեջ են գցել»,- նշեց Աշոտ Մելիքյանը հավելելով, որ շատ դեպքերում տեսանյութից չէր երևում ՀՀ վարչապետ Սերժ Սարգսյանը մարզեր այցելում էր որպես վարչապետ՝ ու՞մ քարոզարշավի շրջանակում, կամ զգինորականներին բնակարանի բանալիներ հանձնում էր ի պաշտոնե»:

Փորձագետ Մեսրոպ Դարոյությունյանն անդրադարձավ հանրապետական մամուլի և ռադիոկայանների աշխատանքին. «Տպագիր մամուլին մեծ ուշադրություն չենք հատկացրել: Նախ քիչ քանակությամբ է տպագրվում և բոլորին հասանելի չէ միայն մեծ համայնքներն են ստանում, իսկ փոքր քաղաքներն ու գյուղական համայնքների բնակիչները հիմնականում զրկված են պարբերական մամուլ կարդալու հնարավորությունից: Ռադիոկենտրոններից առավել անաչառ աշխատել է «Ազատությունը», երկրորդ տեղում «Հանրային ռադիոկայանն է»:

ԶԲԱ Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սարգսյանը ներկայացրեց իրենց գրասենյակի կողմից կատարված դիտարկման արդյունքները (գրասենյակը ընտրություններից դեռևս 2 շաբաթ առաջ սկսել է իրականացնել «Ընտրելու իրավունքը ու՞ եմ» դիտարկության առաջելությունը ընդգրկելով Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերը): Նա նշեց, որ ուշադրություն են դարձրել հիմնականում «Ընտրական օրենսգրքին», թե որքանով են կիրառվել, պահպանվել կամ շրջանցվել օրենքները:

«Լոռու մարզի 6 հեռուստալայաններից միայն «Ամկյուն զունարած 3» ԴՆԵՐ է, որ պաշտոնապես ներկայացրել է 1 րոպեի սակագինը, մնացած բոլոր ԴՆԵՐը ձեռնարկ են մնացել սակագին ներկայացնելուց: Մեծ ծանրաբեռնվածություն աշխատել են Վանաձորի հեռուստալայանները. հաշվի առնելով, որ քաղաքը ընդգրկում էր 29-31 ընտրատարածքները՝ բացի համայնական ընտրակարգով առաջադրված 23 կուսակցությունների ու դաշինքների այցերից՝ ԴՆԵՐն անդրադարձել են նաև մեծամասնական ընտրակարգով առաջադրված բոլոր թեկնածուներին (թիվ 29-ում 2, թիվ 30 4, թիվ 31-ում 5 թեկնածու էր առաջադրված): Տեղական ԴՆԵՐը աչքի են ընկել ծավալուն լրատվական թողարկումներ պատրաստելով, այսինքն խախտվել են հեռուստառեպորտաժի օրենքները, հեշտությամբ շրջանցվել հեռուստառեպորտաժի չափանիշները: Գոյություն ունեցող հաղորդաշարերով քարոզարշավ է տարվել, կամ հեռուստառեպորտաժի մեծ մասամբ տրամադրվել են 1 թեկնածուի: Առաջին անգամ մարզային հեռուստառեպորտից հակաքարոզչություն է հնչել»,- ասաց ԶԲԱ Վանաձորի գրասենյակի ղեկավարը:

Դիտարկման արդյունքներն առաջիկայում կիրառարկվեն «ՀՀ ԶԼԱ-ների 2007 թվականի խորհրդարանական ընտրությունների լուսաբանման սննդիթրինգ» ծրագրում:

19-րդ դարի վերջին անտառածածկ գոտիներն զբաղեցրել են Հայաստանի տարածքի 20, 1981 թվականին՝ 11,2 տոկոսը: Աճյալ փորձագետների դիտարկման արդյունքներով այժմ անտառներն զբաղեցնում են երկրի տարածքի մոտ 10 տոկոսը: Հայաստանի անտառները վերջին 70 տարիների ընթացքում 2 անգամ ենթարկվել են զանգվածային ծառահատումների: Նախ 1930-50-ականներին, երբ հատումները կատարվում էին արդյունաբերական նպատակներով, և երկրորդ անգամ 1991-2000-ականների սկզբին: Վերոնշյալ ծառահատումների արդյունքում հատվել է շուրջ 40.000 հա անտառ, որից 7000-ը համաարած: Վանաձորի 22.000 հա անտառից հատվել է 10.000 հա, որից 3000 հա լանջերից, ինչն էլ դարձել է սողանքների անխուսափելի պատճառ: Բնապահպանական խնդիրներով, մասնավորապես անտառների պահպանությամբ, անտառվերականգնման աշխատանքներով զբաղվում են մի շարք պետական կառույցներ, հասարակական կազմակերպություններ: Գործին, սակայն, չի օգնում նաև նորանոր բնապահպանական օրենքների ընդունումը, քանի որ դրանք գործնականում կամ չեն կիրառվում, կամ կիրառվում են մասամբ: Եվ եթե նախկինում մարդիկ ծառերը կտրում էին որպես վառելափայտ, ապա այժմ կտրում են որպես օգտակար ու շահավետ շինամիջոց...

«Լոռու մարզում բնապահպանական խնդիրներ միշտ էլ եղել են, սակայն այսօր դրանք դարձել են անլուծելի: Երեք տասնյակից ավելի բնապահպանական օրենքներ ու որոշումներ ունեն, որոնց մեծ մասը, սակայն, չի գործում: Դրա փոխարեն լավ է գործում «տանիքի» օրենքը», - ասում է «Հայաստանի Կանաչների միության» անդամ Սարվան Քառայանը:

Լոռու տարածքային բնապահպանական տեսչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Լյուվա Քառայանի տեղեկացմամբ տարեցտարի անտառահատումների թիվը նվազում է: Տեսչության աշխատակիցների կողմից 2006 թվականի հունվար-հունիս ամիսներին հայտնաբերվել է ապօրինի անտառահատման 60 դեպք, 2007-ին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, 35 դեպք: Որքանով են այս թվերն իրատեսակյան. ծառահատումները են նվազել, թե՛ հայտնաբերվող դեպքերը. հարցին տրվող պատասխանները, հասկանալի է միաբուրբ չեն



կարող լինել: Լ. Քառայանը չի բացատրում, որ հնարավոր է այլ դեպքեր էլ եղած լինեն, որոնք, սակայն, չեն նկատվել տեսչության աշխատակիցների կողմից: Լոռու մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Վլոդյա Բունիսյանը կարծում է, որ անտառահատումները նվազեցնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է բնապահպանական կրթական համակարգ ունենալ, որը կփոխի մարդկանց հոգեբանությունը, մտածելակերպը. «Վանաձորը հարուստ է եղել անտառներով, և չենք կարող ասել, որ լայնածավալ ծառահատումները կատարվեցին միմիայն պետության թողտուրության կամ պետական պաշտոնյաների չարաչափումների պատճառով: Լավ կլինե, որ մարդիկ նույն ակտիվությամբ, ինչպես որ հատում էին ծառերը, այսօր մասնակցեին կազմակերպվող ծառատունկերին և նպաստեին անտառվերականգնման դժվարին գործընթացին», - նշում է նա: Անտառտնտեսությունների կողմից վերջին տարիներին իրականացվում են ծառատունկման լայնածավալ աշխատանքներ: Ըստ Գուգարքի անտառտնտեսության գլխավոր անտառագետ Գագիկ Ամիրջանի 2006-ին կատարվել են 600 հա անտառվերականգնման աշխատանքներ, այս տարի 120 հա ծառատունկման աշխատանքներ և 70 հա անտառի ցանք: Հարկ է նշել, որ անտառվերականգնման համար պահանջվում է նվազագույնը 50-60 տարի: Գ. Ամիրջանը, խոսելով անտառահատումների բոլոր հնարավոր հետևանքների մասին, նշում է. «Անտառահատումներն իրենց հետքերն ունենում են հողաստեղծի վտանգ: Վանաձոր-ցիները հավանաբար հիշում են, թե ինչպես 1995 թվականին տեղի ունեցած սողանքների արդյունքում շատ բնակարաններ վնասվեցին: Գոյասահ-բերը վտանգավոր են նաև այն առումով, որ քշում տանում են հողի վերին շերտը՝ սևահողը, որն ամենահարուստ շերտն է: Անտառահատումների հետևանքով տեղի են ունենում նաև որոշակի կլիմայական փոփոխություններ, անկայունություն: Մենք սովորեցինք մեջ մտնել ամռան և ձմռան, սակայն վերջին տարիներին լինում են և խիստ ծանրներ, և՛ շոգ ամառներ: Անտառներից մեծ վնաս են հասցնում նաև արածող անասունները, որոնք ոչնչացնում են մատղաշ շիվերը»:

Չանգվածային անտառահատումների արդյունքում որոշակիորեն տուժեց նաև կենդանական և բուսական աշխարհը. շատ տեսակներ հայտնվեցին անհետացման եզրին: «Հայաստանի Հանրապետության կենսաբանների թույլների Կարմիր գիրքը հաստատելու մասին» որոշման մեջ նշված է Հայաստանում անհավաքյալ և անհետացման եզրին գտնվող 387 բուսատեսակների և 99 կենդանատեսակների ցանկը: «Հայաստանի Կանաչների միության» անդամ Ա. Քառայանի կարմիր գիրքը կենդանատեսակների ոչնչացմանը նպաստում են նաև որսորդները. «Հայաստանում պաշտոնապես գրանցված է 26.000 որսորդ, ովքեր ամեն պահի կարող են մտնել անտառ և որս անել: Անհրաժեշտ է կտրուկ նվազեցնել նրանց թիվը», - ասում է Ա. Քառայանը:

Անտառնապահպանման գործում որոշակի աշխատանքներ են կատարում նաև տարբեր հասարակական կազմակերպություններ: Դարբերաբար իրականացվում են անսխտարական մաքրումներ, փակցվում բնապահպանական ճչացող ցուցանակներ, սակայն ոչ բոլորն են հասկանում, որ պահպանելը բնությունը, մաքրելը պահելը մեր շրջապատը և այլ կարգախոսներ սուկ խոսքեր չեն: Բովանդակալից կամ անբովանդակ հանգիստ անցկացնելով մեր զարմահարաշ բնության գրկում, յուրաքանչյուր հեռանում ենք թողնելով սեփական նկարագրի հարի հետքեր:



Լուսանկարները՝ Լիլիթ ՅՈՒՅՄԻՍ

Նևելի ԴԱՎԹԱՆ

ԳԱՅՆԵ ՍԱՐԳՅԱՆ

Կ Ե Ր Պ Ա Ր Վ Ե Ս Տ

«ՄԵՐ, ՆՎԻՐՈՒՄ ԵՎ ԷԼԻ ՄԵՐ...»



*Վանաձորի կերպարվեստի
թանգարանում վերջերս
բացվել էր գեղանկարչուհի
ՄԱՐԻԱՄ ԱՄԻՐԻԱՆՅԱՆԻ
ստեղծագործությունների
անհատական
ցուցահանդեսը:*

Մարիամ Ամիրխանյանը ծնվել է 1951 թվականին: Տասներեք տարեկանից նկարչական կրթություն է ստացել Վանաձորի Ստ. Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցում: Նկարչության զարմանահարաշ աշխարհի նկատմամբ սերը մանկուց է ի հայտ է եկել. դստեր գեղանկարչական ունակություններն առաջինը հայտնաբերել է հայրը: «Նկարչական դպրոցն ինձ համար սրբավայր էր»,- խոստովանում է Մ. Ամիրխանյանը և հավելում, որ հետաքրքիր ու բովանդակալից էին անցնում հատկապես Լևոն Խաչատրյանի, Ժիրայր Կեոնիկյանի, Սերգեյ Իշխանյանի դասաժամերը: Գեղարվեստի դպրոցն ավարտելուց հետո 1968-ին, ընդունվել է Երևանի Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան, 1972-ին ավարտել է, վերադարձել և սկսել է աշխատել Վանաձորում: Նկարչուհու ձևավորման համար նպաստավոր է եղել սերտ շփումը Վանաձորի գեղանկարչական աշխարհի, արվեստագետների հետ:

Հոգևոր լիցքեր Մարիամ Ամիրխանյանն ստանում է բնությունից, նա ամենազերծ զգացմունքներով է կապված Լոռու բնաշխարհի հետ, սիրում է Լո-

ռին, Վանաձորը, ապրում է դրանցով և ցավում, որ բավարար չափով հոգատար չենք բնության ու նաև՝ միմյանց նկատմամբ: Բնության հետ նրա հոգևոր ու ֆիզիկական կապվածությունը դառնում է գեղարվեստական այն ատաղձը, որի վրա կառուցվում են նկարչուհու աշխարհագրագրությունը և ձևամտաձողությունը:

Յուզահանդեսը հնարավորություն է տալիս ուրվագծելու նրա արվեստի ինքնատիպությունը: Պարզորոշ նկատվում են նկարչուհու նախասիրություններն ու հակումը՝ շարունակել հայրենի եզերքի գովերգը:

Ըստ նրա՝ արվեստը համապատասխան գնահատում պիտի ունենա, ստանա անհրաժեշտ քաջակցություն: «Նկարիչը սովորական մարդ չէ... Երան աջակցել է հարկավոր. նկարիչներն զգայուն հոգու տեր մարդիկ են... Ամեն ինչ կարող է ազդել նկարչի տրամադրության վրա»,- ասում է Մարիամ Ամիրխանյանը: Իր առջև ծառայած բոլոր խնդիրները կարողանում է հաղթահարել գեղանկարչության շնորհիվ, ճշմարիտ արվեստի օգնությամբ, բնության հետ հնարավորինս մոտիկից հաղորդակցվելու միջոցով: Ասում է. «Եթե չսիրես բնությունը, ոչինչ չի ստացվի:



Բնությունն իմ բնականությունն է»: Ունի գույների իր նախընտրությունը, իր ներկայանակը, գույների համադրությունների ու հակադրությունների իր համակարգն ու կոլորիտը: Գույների, երանգների միջոցով է փոխանցում զգացմունքներն ու մտքերը, ստեղծում ռեալ աշխարհի, իրականության իր պատկեր-կերպարները: Յուրաքանչյուր նկարչի ներկայանակն, այլ կերպ ասած, անհատական բառարան է: Նրա համար չկան բացարձակապես գեղեցիկ և տգեղ գույներ: Նկարչուհին գույների

տուկ նուրբ ձեռագիրը՝ ապրածն ու զգացածն ինքնատիպ կերպով արտահայտելու ձևը: Նկարում է ոչ թե այն, ինչ տեսնում է, այլ այն, ինչ զգում է: Բնության արտացոլման յուրատիպ ձև ունի մեղմ ու ջերմ գույներով, նրան իսկապես հաջողվում է արտահայտել բնության տրամադրությունը, և ուրախալի է, որ նոր գործերում պայծառությունն ու հույսն ավելանում են:

Ինչպես նկատում է ՎՊՄԻ-ի գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆե-



գեղեցիկ ու տեղին համադրություններ է ստեղծում: Կտավների գույները ծնվում են իր իսկ տրամադրությունից, և բոլոր երանգներն են հարազատ:

Մ. Ամիրխանյանի կտավները նույնքան պարզ ու անմիջական են, որքան ինքը, իսկ յուրաքանչյուր ճշմարիտ արվեստագետի աշխատանք սեփական ներաշխարհի արտահայտությունն է: Յուզահանդեսում բավականին մեծ տեղ է հատկացված բնանկարներին: Թարմ, անմիջական ու անկեղծ վերաբերմունքը պատկերվածի նկատմամբ այստեղ հարազատացել է խորը և ազնիվ ու մի քիչ էլ «միամիտ» աշխարհընկալման հետ: Բնանկարներում զգացվում է նկարչուհու առանձնահա-


սոր Մելա Սանթրյանը, «Մարիամ Ամիրխանյանը կարողացել է պոտոր, դաժան, ճնշող ժամանակներում իր կանացի նրբությունը, իր հոգու ամբողջ խորությունը տալ այս բնանկարներին. նրա կտավները դիտողին բարություն են ներարկում»:

Մարիամի արվեստի երկրպագուները հիացած են նկարչուհու նոր աշխատանքներով և կարծում են, որ նրա ստեղծագործական կյանքում նոր փուլ է սկսվում ինքնին բնականության թարմ լուծումներով:

Հայկուհի ԱՎԱԳՅԱՆ
Վանաձորի կերպարվեստի
թանգարանի գիտաշխատող



ՄԵՐՈՒԺԱՆ ՏԵՐ - ԳՈՒԼԱՆՅԱՆ



1977-ից ԽՍՀՄ գրողների միության անդամ, արձակագիր, հրապարակախոս **Մերուժան Տեր-Գուլանյանը** ծնվել է 1949 թվականի նոյեմբերի 29-ին Ջավախքի Գոման գյուղում: 1973-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ժուռնալիստիկայի բաժինը: 1973-ից աշխատել է «Գարուն» ամսագրի խմբագրությունում՝ նախ որպես գրական աշխատող, 1975-84-ին՝ հրապարակախոսության բաժնի վարիչ, 1984-86-ին ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ, 1986-ից՝ գլխավոր խմբագիր:

Նրա առաջին ստեղծագործությունը լույս է տեսել «Պիոներ» ամսագրում 1963-ին: Բազմաթիվ գրքերի հեղինակ է, նրա ստեղծագործությունները թարգմանվել են տարբեր լեզուներով:

1978-ին արժանացել է ԶԼԿԵՄ Կենտրոնի մրցանակին, 1980-ին՝ Միջայել Նալբանդյանի անվան մրցանակի դափնեկրի կոչման:

Գրասերների համար անսպասելի լույս տեսան Մերուժան Տեր-Գուլանյանի «Գիշերային վարդ» (2002թ.) և «Ցավի որսորդը» (2005թ.) բանաստեղծությունների ժողովածուները:

Ընթերցողին ներկայացվող չափաօճակ նրա տաղանդի նոր դրսևորումն է:

Բանաստեղծ գառնալու Հովակոսյանները երբեք չեմ'ունեցել: Մանասկոն, որ 18 տարեկանից Հետո բանաստեղծություններ չեմ' գրել: Վերջին տարիներին, բացի օրագրից, ընդհանրապես ոչինչ չեի գրում և վստիչեում էի սպիտակ թիվիկից: Վերջերս, սակայն, երբ փորձում էի սկսել վարույց ծրագրած «Փչե սրբակ» վերնագրով վեպը, սկսեցին ինձ այցելել մտքեր, որոնք տարբերակներն բանաստեղծության կերպ էին առնում, և ես գրանք գրի առա... [Նվերներին խորհրդով որոշեցի հրատարակել...]

Մ. Տեր-Գուլանյան

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՎԱՐԳ
Գիշերվա վարող՝ գաղտնիքը կյանքի, Բացվում է համառ՝ աշխարհից թաքուն,-
Վարդի երազը լույսը չգիտի,
Չի տեսնում նրա թախիծը անհուն:

Բացված ծաղիկը կիսախավարում
Մեզ հասցնում է սահմանն անհունի,-
Ուր դու քո հայրն ես և որդին ջահել՝
Վարդի գաղտնիքն է... որ անուն չունի:

ԿԻՐԱԿԻ
Երեկվա օրը ջրերը տարան,
Ո՞վ է աշնան մեջ դուռը բացելու,
Ո՞վ է երագուն մոմե մատներով
Ինձ տերև-տերև հանգստացնելու:

Մենակ եմ հիմա մուտքի անձավում
Անորոշության ջրերի վրա,
Միայն կարողից աչքերս եմ ցավում
Փնտրելով ծովե ժպիտը նրա:

Ու ալիքներն ինձ ճոճում են թեթև
Տանում մոլորված նավակի մնամ,
Որ սեր շշմբած ջրերի լեզվով
Արև անունով քնած աղջկան:

ՄՆՔՈՒՆԻՑՄԱՆ ԸՍԲՈՒՆՄԿՈՒԹՅՈՒՆԸ
Երևաններում կամուրջ չմնաց,
Որից չզգվեմ ամեն կես գիշեր,
Փողոցները խուլ, պատուհանը բաց,-
Եվ ինձ մեծարող անտերունչ շներ:

Գիշերվա աղոտ թունելի միջով
Էլ չեմ երագում ոչ մի տեղ գնալ,
Եվ մոռանալով օվկանոս ու ծով՝
Ուզում եմ քո տան պատի տակ մնալ:

Միայն խոստացիր մենակ չմնա,-
Մեռած աստղերը նորից ես կգամ,
Կյանքը գինի է, թախիծը՝ կարաս,
Երբ ես չեմ լինի, կամուրջները կան:

ՄՆԱՑՑԱԼԸ՝ ԼՈՒԹՅՈՒՆ
Աշնան իրիկվա մեջ վառվող լուցկու նման
Յուսահատ է բախտը և խոստումներ չունի,
Միայն սերն է ապրում՝ աստղափոշին վրան,
Միրո լույսն է միայն, որ վերադարձ ունի:

Մերը՝ որք երեխա, անդունդի դեմ մենակ,
Խոտի մնամ անվերջ, ծաղկի մնամ անվարձ,
Մեռնող լույսերի մեջ ամուր գրկեք իրար՝
Անհուսահատ մանուկ սիրո ձեռքը բռնած:

ԱՄՏՏՈՆ ՅՈՒԹԵՐՈՒԳ ԳՈՒՈՒՔ
Հին պտույտում համատարած՝
Հորիզոնը մնաց թափուր,
Կանաչ-կարմիր օրերն անցան,
Ո՞վ կբերի մեզ բարի լուր:

Անհուսահատ, անհանգրվան՝
Չեռքերիս մեջ լույսի փշուր,
Կորցրեցինք հին տան ճամփան
Չգտնելով ոչ երգ, ոչ հուր:

Կորցրեցինք, հիմա մենակ՝
Իրար խառնած օր ու տարի...
Բայց չբացվեց դարպասը փակ,
Չզրնգաց խոսքը բարի:

Ես քո մասին երգ գրեցի
Թափառական աշուղի պես,
Լույսը գարթնեց քո աչքերում,
Բայց խավարում մնացի ես:

ԻՆՎԱՍՏՈՒՆ ԲԱՆՑ
Ես տանուկ տվի թղթախաղի մեջ,
Բայց կեսգիշերին սերդ շահեցի,
Նշանը նույնն էր՝ պարտություն անվերջ,
Երբ թղթախաղը քո ձեռքով բացի:

Չեռքը թեթև էր, պարտությունը՝ մոտ,
Խաղընկերներս թող ինձ նախանձեն.
Շահած փողերի հաշվի մեջ աղոտ
Մեզ մենակ թողած՝ հեռացան անձեն:

Մի բաժակ օղի, աղջիկ անամուն,
Այս պարտության մեջ մեղավոր չեմ ես,
Գիշերը նորից չեմ գնա ես տուն՝
Փողն իրենք տարան, սերը թողին մեզ:

ՄԻ ԲԱՏՄԱԿ ԳԵՆԻ ՎԵՐԱ ՄԱՐՈՒՄՆԻՒՄ ԵՎ ՑԳԵՐՔԻ ՎԵՑ
Տղերքի ստվերն ընկել է հողուս՝
Ասես անհունի սահմանը անցա...
Ինչպե՞ս պատահեց, որ Պապկավոկում
Ես հին ջրերի լեզուն մոռացա:

Իմ ընկերները հեռացան մեկ-մեկ,
Տրտում առկայծող լապտեր եմ հիմա,
Այնինչ խնջույքի փրփուրը երեկ
Ալեկոծվում էր աստղերի վրա:

Դու ինձմից հեռու, ես՝ մենակ ահա՝
Տառիս հնամաշ կարպետից կախված,
ճոճվում եմ անհայտ անդունդի վրա՝
Գինեհամ հացը սեղանին թողած:

ՏԻԵՔԵՐԱԿԱՆ ՍՈՂՔ
Տեսիլքի պես՝ ծիրան անապատը հոսեց՝
Ծովերի հին կյանքում անուններս գրած,-
Վերջին հեռացողը մատները ինձ քսեց,-
Մենք գնացինք, սակայն, հեռացողը մնաց:

Խաչմերուկում անցյալ մոլորվեցինք անհետ,-
Երջանկության ոսկին անդունդներում պահած,
Ծովի լքված ծայրը էլ չի կանչի մեզ ետ,-
Աստված այդ ո՞ր գնաց՝ անապատը հազած:

ՉՀԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՀԱՑԲԵՆԻՔ
Քարտեզանկար մեր հոգիներում,
Առասպելներում՝ մեր հար-քարակիր,
Մեզ մի մամուռապատ հեքիաթ էր գերում,
Թե իբր գիտենք հայրենիքն անգիր:

Բայց երբ օրհասի ճոճը մեծացավ,
Հեքիաթը տեսավ իրականալիքն.
Լեգենդամլար մշուշը անցավ՝
Մեր ձեռքում թողած կյանքի բանալին:

Եվ խաչ բանալին՝ իբրև գաղտնատես,
Մեր վզից կախված, բայց և մեր ձեռքում,
Ելել ենք ոտի որպես մաշված ծես,
Արդեն քանի դար դուռն ենք որոնում:

ՉՏԵՍԱՒԹՅԱՆ ՀՄԱԳՈՒՄԵՐԱՎ
Չտեսները այսօր այնքան շատ են տեսել,
Ավելորդ է նույնիսկ լինել գրածանաչ,
Եվ, երկիր ին տեսած, դու այս ո՞ր ես հասել,
Երբ անարգուն են դեռ սուրբ տաճարներ ու խաչ:

Այսօր ոչ մի փրկիչ քո խաչն էլ չի տանի,
Որդիներդ՝ չտես, քեզ մենակ են թողել,
Իմ հայրենիք՝ երկիր, դու՝՝ քեզ փոսից համիր,-
Եվ սովորիր՝ ինքը փրկիչներին փրկել:

ՉԻ ՆՄՏԵԼԻՄ ԱՄՏՏՈՒՆ ՄԻ՝ ՍՈՈՍՑԵՐ
Թողեք ապրենք, տղերք, թողեք մենք էլ ապրենք,-
Դուք էլ ապրեք Աստուծո հաշտությունը հազած,
Չհասկացված ցեղիս առաջնորդը դու չեք,
Դուք ցերեկվա աստղ եք՝ երեկոյան հանգած:

Եվ մի՛ նուրախացեք, որ ուրիշն է լալու,-
Իբր՝ արդարության հրեշտակներ չկան,
Ինչ որ դուք արեցիք՝ ձեր դիմաց է գալու,
Եվ ձեր լացը լսող ուրիշ տղերք կզան:

«Չայր մեր»-ը Քրիստոսի կողմից ավանդված միակ ամբողջական աղոթքն է, այդ պատճառով կոչվում է Տերունական աղոթք և արտասանվում է բոլոր եկեղեցիներում: Այն գրառված է 1-ին դարում ընդարձակ և համառոտ տեքստերով (Մատթ.6:9-13), (Ղուկ. 11:2-4) ավետարանիչների կողմից: Առաջինը երկարառուն է, քանի որ գրվել է աղոթելու սովոր հրեա քրիստոնյաների համար, իսկ երկրորդը՝ դեռ նորադարձ հույն հավատացյալների համար:

ՏԵՐՈՆԿԱՆԱԿԱՆ ԱՎԵՏԱՐԱՆԻ ԿՈՎՈՐԵՐԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ ԸՍՏ ՍՈՒՐԵ ԶԱՅՐԵՐԸ

«Թո՛ղ մեզ մեր ինչպես մենք մ մեզ պարտք եղողներին»: Սա մարդափրկություն է ընդգծում, որ մեղանչելուց հետո դարձյալ թողություն գտնենք՝ ըստ մեր ունեցած ներման կարողության: Երբ Աստծո պատվիրանը խախտում ենք, պարտապան ենք դառնում, իսկ պահելիս՝ պարտատեր: Այդ երկուսի համար հատուցվում է ամբողջ կյանքում: Դրանով կցորդ ենք դառնում Աստծո իշխանությանը՝ մեղքերը ներելու իրավունքով: Չներելով՝ բացառում ենք մեր Տերունը, ատում և ռիսկալույթյամբ նմանվում սատանային ու հեռանում Աստծուց:

Նա տրամաբանական սկզբունքով մեկնում է թե՛ յուրաքանչյուր բառ և թե՛ նրանց միահյուսումից ստացված յուրաքանչյուր արտահայտություն: Նա ասում է. «Աստված Չայր է կոչվում ըստ բնության, ըստ արարչության, ըստ նորոգության, ըստ իմաստության, ըստ խնամքի, ըստ գործքայն և ըստ ժառանգության»:

Որդու նմանությամբ, որը, սիրով լեցուն, երևելիների մեջ Աստծո արքայությունն է խնդրում, որպեսզի մեզ փրկի խավարի իշխանությունից, ինքը թագավորի մեզ վրա և ոչ մեղքը, բռնավորից փրկի, ինչպես Իսրայելին՝ փարավոնից: Աղոթքի ժամանակ դևերը շրջապատում են մեզ, և երբ խնդրում ենք Աստծո թագավորությունը, դևերն անհետանում են, ինչպես խավարը՝ լուսինից: Ոմանք այս հատվածը թարգմանում են այսպես. «Թող գա քո Սուրբ Յոզիմ», որով ակնառու է, որ Սուրբ Յոզիմ արքա է Չորը և Որդուն հավանում է:

«Չայր մեր» ասելով՝ հրեաներից առանձնացվեցինք և աղոթքի ձևն իմացանք, իսկ հեթանոսներից գատվելով՝ աղոթքի խոսքը սովորեցինք, հրեական-բնորոշ հավասարվեցինք: Այս աղոթքը գերագույնն է բոլորից, քանի որ Աստծո կողմից է ուսուցանվել, համառոտ է, այն հարկավոր է ամեն մարդու և լեցուն է հոգու և մարմնի բոլոր բարություններով: Տասը պատվիրանների նմանությամբ՝ տասը խոսքից է կազմված և 7 խնդիրներից, 4-ը՝ մարմնավոր և 3-ը՝ հոգևոր: Իսկ «երկնքում» ասելով ոչ թե՛ թյուրիմացաբար պարփակում ենք անպարագրելի Աստծուն, այլ ընդգծում նրա փառքի բարձր վայելչությունը,

«Թող լինի քո կամքը երկրի վրա, ինչպես երկնքում է» 4 բան է նշանակում: Նախ և առաջ, որ ոչինչ չկա Տիրոջ կամքին հակառակ, որն արգելի միանալ Չաղթանակած եկեղեցուն: Եվ ինչպես երկնքում է Աստծո կամքը, նույնպես էլ մեր մեջ թող կատարյալ լինի: Նաև այդպիսով փափագում ենք, որ արմատախիլ արվեն մոլությունն ու մեղքը, և սերմանվեն ճշմարտությունն ու արդարությունը: Եվ նրա խնամքի



Չորս ավետարանիչները պատկերված են կանգնած. Սեբաստիոն ծաղրկի Ավետարանից, Բերկոլի, 1338: ՍՍ N 4813, թերթ 5բ

ամենագոր կարողությունը: Դրանով աղոթքի բովանդակությունը երկնքից է տրվում:

Ինչու՞ ենք ասում մեր: Քանի որ իմ ասելը բնությանը Որդուն է հատուկ, իսկ մերը պատշաճ է մեզ: Այդպիսով վերանում է ազահությունը, քանզի աղոթում ենք բոլոր մարդկանց համար: Վերանում է ատելությունը, և սեր է հաստատվում: Վերանում է հպարտությունը, և խոնարհություն է սերմանվում: Այդպիսով Տերը ցույց է տալիս բոլորի հավասարությունը և ընդհանրական աղոթքով միանում բոլորի աղոթքին:

«Թող սուրբ լինի քո անունը» ասելով՝ 4 իրողություն ենք վկայում: Նախ այն, որ ամեն ինչից առաջ մենք պետք է Աստծո փառքը խնդրենք, քանի որ սուրբը փառավոր է նշանակում: Բայց երանելի է այն քրիստոնյան, որի կյանքով Աստված կփառավորվի: Իսկ ծույլի համար ասում է. «Իմ անունը ձեր պատճառով հայտնվում է հեթանոսների մեջ»: Տիրոջ սուրբ անունը սրբարար է և հավատքի ու գործի սրբություն է պարգևում:

«Մեր համապագորյա հացը» ենք խնդրում, քանի որ մարմնի մեջ լինելով, կարիք ունենք կերակրի, որից ավելի հարստություն չենք խնդրում: Սա ներառում է նաև մյուս պետքերը՝ ըմպելիք, ծածկույթ և այլն:

«Չայրը» քաղցր, պարծելի և շնորհալի անուն է՝ կազմված չորս տառերից, որոնք միասնական և ներհանրապես են միմյանց, ինչպես ինքը՝ հավասարապատիվ և անբաժանելի Սուրբ Երրորդությունը: Երբ «Չայր մեր» ենք ասում աղոթքի ժամանակ, կարծես միանում են բոլոր քրիստոնյաները հոգով ու մտքով, և կատարվում է այն անձեռակերտ տաճարն արքունական, որի բարերը քրիստոնյաներն են, գմբեթը՝ Քրիստոս: Եվ երկինքն այն դրախտն է, ուր գտնվում էինք մենք՝ անմեղ եղած ժամանակ:

Ինչու՞ ենք ասում «մեր հացը»: Այն ընդհանուրի կերակուր է, ինչպես որ աղոթքն է ընդհանուր: Այդպես խնդրում ենք մեզ անհրաժեշտը, մեր արդար վատասկը և ոչ օտարի՝ անհրավոթյամբ ձեռք բերածը: Եվ խնդրում ենք ոչ միայն մեր մարմնավոր, այլև հոգևոր հացը, ոչ թե անհավատներինը, դևերինը կամ անասուններինը: Եվ այն խնդրում ենք մշտապես: Ասում ենք տուր, ոչ թե վաճառիր: Քանի որ ստեղծեց մարմինը և բերան տվեց, պարտական է տալու: Մեկ օրվա համար ենք խնդրում, որովհետև անցյալը կորած է, գալիքը՝ անհայտ, և վաղվա օրն իրենը կհոգա:

«Թող գա քո արքայությունը» ասելիս արքայություն ենք խնդրում բարի

«...Այս փրկիր չարից...» արտահայտությունը սատանայի հետ անհաշտ պատերազմի հրաման է մեզ համար: Նա ի բնե չար չէր, այլ իր կամքով չարացավ և չզղջաց: Այդ պատճառով չպետք է մարդու դեմ չարանալ, քանի որ աղքատը սատանան է: Թվում է, թե ի բնե չարն առավել չար է, ինչպես սողունների խայթոցը և թույնը կամ գազանները: Այնինչ այն, որ կամավոր է, մեղավոր է, ինչպես մարդը, ուրեմն ինչ որ կամավոր է, առավել չար է, և սատանայի կամքը չարությանը անփոփոխ է: Փորձություն են սատանայի խաբեությունը, զգայարանների սխալվելը, մարմնի տանջանքը և չար՝ գիտակցաբար մեղանչելը, հոգու հավիտենական տանջանքը: Այս ամենից ազատվում ենք աղոթքով:

«Թո՛ղ մեզ մեր ինչպես մենք մ մեզ պարտք եղողներին»: Սա մարդափրկություն է ընդգծում, որ մեղանչելուց հետո դարձյալ թողություն գտնենք՝ ըստ մեր ունեցած ներման կարողության: Երբ Աստծո պատվիրանը խախտում ենք, պարտապան ենք դառնում, իսկ պահելիս՝ պարտատեր: Այդ երկուսի համար հատուցվում է ամբողջ կյանքում: Դրանով կցորդ ենք դառնում Աստծո իշխանությանը՝ մեղքերը ներելու իրավունքով: Չներելով՝ բացառում ենք մեր Տերունը, ատում և ռիսկալույթյամբ նմանվում սատանային ու հեռանում Աստծուց:

«...Այս փրկիր չարից...» արտահայտությունը սատանայի հետ անհաշտ պատերազմի հրաման է մեզ համար: Նա ի բնե չար չէր, այլ իր կամքով չարացավ և չզղջաց: Այդ պատճառով չպետք է մարդու դեմ չարանալ, քանի որ աղքատը սատանան է: Թվում է, թե ի բնե չարն առավել չար է, ինչպես սողունների խայթոցը և թույնը կամ գազանները: Այնինչ այն, որ կամավոր է, մեղավոր է, ինչպես մարդը, ուրեմն ինչ որ կամավոր է, առավել չար է, և սատանայի կամքը չարությանը անփոփոխ է: Փորձություն են սատանայի խաբեությունը, զգայարանների սխալվելը, մարմնի տանջանքը և չար՝ գիտակցաբար մեղանչելը, հոգու հավիտենական տանջանքը: Այս ամենից ազատվում ենք աղոթքով:

«Թո՛ղ մեզ մեր ինչպես մենք մ մեզ պարտք եղողներին»: Սա մարդափրկություն է ընդգծում, որ մեղանչելուց հետո դարձյալ թողություն գտնենք՝ ըստ մեր ունեցած ներման կարողության: Երբ Աստծո պատվիրանը խախտում ենք, պարտապան ենք դառնում, իսկ պահելիս՝ պարտատեր: Այդ երկուսի համար հատուցվում է ամբողջ կյանքում: Դրանով կցորդ ենք դառնում Աստծո իշխանությանը՝ մեղքերը ներելու իրավունքով: Չներելով՝ բացառում ենք մեր Տերունը, ատում և ռիսկալույթյամբ նմանվում սատանային ու հեռանում Աստծուց:

«Թո՛ղ մեզ մեր ինչպես մենք մ մեզ պարտք եղողներին»: Սա մարդափրկություն է ընդգծում, որ մեղանչելուց հետո դարձյալ թողություն գտնենք՝ ըստ մեր ունեցած ներման կարողության: Երբ Աստծո պատվիրանը խախտում ենք, պարտապան ենք դառնում, իսկ պահելիս՝ պարտատեր: Այդ երկուսի համար հատուցվում է ամբողջ կյանքում: Դրանով կցորդ ենք դառնում Աստծո իշխանությանը՝ մեղքերը ներելու իրավունքով: Չներելով՝ բացառում ենք մեր Տերունը, ատում և ռիսկալույթյամբ նմանվում սատանային ու հեռանում Աստծուց:

Այս աղոթքով հիշվում են երկնավորները, պապ նաև մենք, որ բանական բնություն ենք, թողություն ենք խնդրում բոլոր (մասնավոր՝ 7 մահացու) մեղքերի համար և չարաներժ՝ պաշտպանություն արելուսով ու Տիրոջ հոգածությանը ակնկալելով՝ ըստ այն խոսքի, թե այսուհետև ես ձեզ հետ եմ՝ մինչև աշխարհի վախճանը...

«Թող գա քո արքայությունը» ասելիս արքայություն ենք խնդրում բարի

ՍԱԿԻ ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԲՈՒՆՈՒՅՑ ԱՃԻԱՏԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆ

← էջ 1
մարդու իրավունքների վիճակի քննարկման վրա: Հետագայում փորձագետներ կնշանակվեն որակավորված թեկնածուների իրավաբանական ցանկից:

Ինչևէ, ընտրության գործընթացում անհանգստացնող է խորհրդի՝ տարածքային խմբերի կողմից նշանակված հանձնաժողովի դերը: Դա կարող է թույլ տալ, որ գործընթացի վրա ավելի շատ ազդեն քաղաքական նկատառումները:

«**Խորհրդի փորձագետները կոնկրետորեն նոր «կարգազօծի օրենսգրքով», որը թեև չի սահմանափակում նրանց անկախ դերը, բայց չափազանց պարտադրող է՝ աշխատանքային մեթոդների առումով»,** - նշել է «Սարդու իրավունքների դիտակը»:

Թեև խորհուրդն իր տրամադրության տակ ունեցել է մի ամբողջ տարի հատուկ ընթացակարգերը վերանայելու համար, որոշել է աշխատանքը շարունակել նաև հաջորդ տարվա ընթացքում: Նորից քննարկվելու են մանրամասները:

Հնայած հետագա վերանայման այդ

հնարավորությանը խորհուրդը ենթարկվեց քաղաքական ճնշման՝ անմիջապես հեռացնելով երկու երկրների Բելառուսի և Կուբայի փորձագետներին: Այս երկու մանդատների գոհաբերումն այլընտրանք էր նպատակադրված հատուկ երկրների հարցերով փորձագետներ նշանակելու՝ խորհրդի կարողության պահպանմանը և մնացած մանդատների շարունակմանը (Քիրմա, Բուրունդի, Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետություն, Հայիթի, Լիբերիա, Յուսիսային Կորեա, Պաղեստինյան գրավյալ տարածքներ, Սոմալի և Սուդան):

«**Նկատի ունենալով մարդու իրավունքների հույժ անճարապետների պայմանները Բելառուսում և Կուբայում՝ անարդարացի է այդ երկրների հանդեպ ուշադրությունը նվազեցնելու խորհրդի որոշումը,** - ասել է Հիբբը: - ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեան դատապարտել է Բելառուսի անթրափի հաշվեկոծությունը և մերժել խորհրդի համար նրա թեկնածությունը: Ինչու՞ է

խորհուրդն ինքը կիրառում այլ չափանիշ»:

«**Հանձնողի անոր պարբերական գեկույցը**» խորհրդի անձնամեծ նորարարությունն է, որը ողջունելի հնարավորություն է ապահովում զբաղվելու մարդու իրավունքների խախտումների դեպքերով, որտեղ էլ որ դրանք տեղի ունենան: Այնուամենայնիվ, խորհրդի կողմից հաստատված ընթացակարգը, թվում է, ավելի հակված է չվիրավորելու որևէ երկրի, քան պաշտպանելու մարդու իրավունքները: Մնում է պարզել, թե արդյոք երկրները ցանկություն կունենան՝ կիրառելու այս համակարգը մնացած խախտումների վերացմանն ուղղված եական միջոցներ ձեռնարկելու վճռականությամբ:

Ըստ «Սարդու իրավունքների դիտակի»՝ ընդհանուր առմամբ, խորհրդի այս դիրքորոշումը կառույցի հետագա աշխատանքի համար, թեպետ թույլ, բայց հիմք է ապահովել: Խորհրդի ծավալումն օրակարգը հնարավորություն է տալիս զբաղ-

վելու ուշադրություն պահանջող՝ մարդու իրավունքների խախտումներով: Ի տրամադրությամբ «Հանձնողի անոր պարբերական գեկույցը» պետք է երաշխավորի, որ աշխարհում ոչ մի երկիր վերահսկողության առումով բնավ անձեռնմխելի չէ:

«**Այն երկրները, որոնք հոգ են տանում մարդու իրավունքների համար, պետք է դադարեցնեն այն փակել խորհրդի բացթողումների վրա և փոխարենը ստանձնեն այն կիրառելու և չվիրավորելու որևէ առևտրի հարցում:** - Որպես առաջին քայլ՝ երկրները, որոնք կարևորում են ավելի ուժեղ խորհուրդ ունենալը, պետք է մերժեն և՛ ավելի մեծ քաղաքական կապիտալ, և՛ ավելի շատ աշխատակիցներ ու ռեսուրսներ՝ ճգնաժամի ընթացքում նպատակահասունելու համար»:

«Սարդու իրավունքների դիտակ»

միջազգային իրավապաշտպան կազմակերպություն (ժնև, 2007 թ. հունիսի 19) Թարգմանությունը՝ Լուսինե ՄԱՅԿԱՅԱՆԻ

ՀԵՏԱԳԱՐԶ ՀԱՅԱՍՏՔ

Երիցս ցավ ես գզում, երբ այցելում ես հրաշխի հովհաննիսյանի բնակարան. պատին գոհված տղաների և հանգուցյալ տիկնոջ մեծադիր նկարներն են...

Արցախն ազատ և անկախ տեսնելու նպատակով նրա 2 որդիները զինվորազինվեցին: Վաչագանը պատերազմի առաջին իսկ օրից իրեն մղվեց Արցախի պաշտպանության գործին: Ընտանիքի անդորրը խաթարվեց 1990-ին, երբ իր որոշման մասին նա հայտնեց ծնողներին ու կնոջը, ովքեր փորձեցին ամեն գնով նրան ետ պահել: Ոչ մի թախանձանք չօգնեց. «*Քա ես տանը մտածեմ, թուրքը զա իմ հայրենիքը գրավի*»: Անցավ մեկ ամիս: Ընտանիքից գաղտնի նա անդամագրվեց «Գուգարք» վաշտին ու մասնակցեց նախ Հուշիի, ապա Լաչինի ազատամարտերին...

1992 թ.-ի օգոստոսի 22-ին՝ 30 տարեկանում, Վաչագան Հովհաննիսյանը գոհվեց: Նրա մարտական ուղուն ծնողներն ու կինը նույնիսկ ծանոթ չէին: «Եթե Լաչինում չի վրկվե, մենք չէինք իմանա, որ նա Լաչինում էլ է կռվել, իսկ Հուշիի մասին պատմել են ընկերները, երևի սիրովելու համար... Այլ մարտերի մասին ես ինքս չգիտեմ կախ լսել», - պատմում է որդեկորույս հայրը:

Վաչագանը հետմահու պարգևատրվել է արիության շքանշանով: Մանկության ընկերները նրա հիշատակին շենքի բակում հուշադրույր կառուցեցին: Ու կարծես թե կրկնապատկվեց հոր վիշտը:

Կրտսեր որդին Հունանը, շարունակեց ազատամարտի եղբոր կիսատ թողած գործը, ապա Աստուծ կամոք բարեխաջող տուն վերադարձավ: Չոհված եղբոր երեխաներին մեծացնելի պետք, բայց մի օր տագնապի ազդանշան հնչեց. պարտավոր էր, պետք է գնար: Հայրն այդ ժամանակ իմացավ, որ նա գաղտնի

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԱՆ ԿԱ ...

անդամագրվել է Իջևանի վաշտին և արդեն իսկ սահմանապահի իր գործն է արել Օձարի լեռանցքում, Քարվաճառում և երկրորդ անգամ է գնում Իջևան:

Տարիներ առաջ սկիզբ առած խստքն ու գրույցը շարունակվեցին, նույնիսկ եղբոր որբ երեխաների ու իր զավակների համար ետ չկանգնեց. «*Վերջին օրերին կրակոցները շատացել են, այժմ կրկնակի գզունություն ու աշխրություն է պահանջվում ամեն մի հայ զինվորից: Որ բուրդ տանը մտածեմ ու չգնանք, բայց մի քանի արած գործն ի՞նչ արժեք կունենա*», - հորից ներողություն խնդրելով՝ ասել ու առանց ետ նայելու գնացել է: 2005-ի դեկտեմբերին նա գոհվեց ծարավ ընկերների համար ջուր բերելիս:

-*Երեք ամիս ընդհանրապես չէր ելել, ասում էին՝ ազդերներն անընդհատ խախտում են սահմանը. այդ օրերին վիրավոր 3 վանածորդի բերեցին, հետո էլ մեկ գոհ ունեցավ Վանածորը... Այդ ժամանակ եմ նրան տեսել. եկավ տուն, երեսնամեթին տեսավ, փաթաթվեց, չէր ուզում բաժանվել, մի պահ ուրախացավ, մտածեցի՞ էլ չի գնա, բայց նորից գնաց: Բոլորս միասին ճանապարհեցինք, փորձում էի համոզել, գրկեց ինձ ու ասաց. «Պապ ջան, քո խաթը շատ է, բայց ես երեխաների խաթըն խախտելի շատ է, նրանք գլխավերևի խաղաղ երկնքի՞ համար ես պետք է գնամ»: Գնաց, որ վերադառնա Նոր Տարուն, բայց...*

Երկրորդ որդու մահից հետո մոր սիրտը չէր իմացավ. մի օր տղայի նկարի հետ խոսելիս հանկարծամահ եղավ: «*Կարճատև կյանք այցերի ժա-*

մանակ անգամ սահմանի թռու-րոհից ոչինչ չէր պատմում, խնայում էր ինձ ու երեխաներին, նույնիսկ հեռուստացույցով պատերազմին էլ ավատ



Վերաբերող որևէ բան չէր թողնում նայեմք. «**Չափազանցված է**», - ասում էր ու նայում երեսիս: Տեսնելով, որ չեմ հավատում, պնդում էր. «**Հավատա՛ծիչը եմ ասում**», - հիշում է հայրը:

Անասելի ցավի ու տառապանքի մեջ Հրաչի Հովհաննիսյանը չի ընկճվում. «*Ես կարող եմ գուրսաբար ծրայել քաղաքում, ճակատս պարզ, բայց նեղսրտում եմ, որ չեմ հետաքրքրվում մեր ընտանիքով: Եթե տղաներս ողջ լինեին, մենք հո ես վիճակում չէինք լինի: Գոնե մի քիչ օգնություն ցույց տո՛ւմ ես երեխաների ոտի կանգնեցնեմ...*»:

Արցունքն աչքերին ու տղաների կարոտն ու կորստի ցավը ծերունական արտում նա խնամում է Վաչագանի և Հունանի զավակներին, դժգոհում դեկլավար զինվորակազմներից, բայց չի ընկճվում, միայն մի փոքր ուշադրություն է ակնկալում...

ՆԱԼԻ ՊԱՎԵՅԱՆ

ՔԱՆԱԿԱՆՆԵՐԻ ԽԱՆՏԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՃՏՊԱՆԵԼՈՒ ԱՆԿԱՆԻՔՈՎ

Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը (ՀՄԻԿ) վերջերս Ա. Դ. Սախարովի անվան Սարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի Հիրակի մարզային գրասենյակում (հասցեն՝ ք. Գյումրի, Մեեր Մկրտչյան 38ա) «Սահմանադրական օրինակաբանության ամրապնդում մարդու իրավունքների պաշտպանության միջոցով» ծրագրի շրջանակներում կազմակերպել էր հանդիպում-քննարկում:

Հանդիպմանը իրավաբան Էմմա Բաղդասարյանը հասարակության, պետական մարմինների, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, անհատներ:

Քննարկվեցին սոցիալական քարտ չունենալու մասին տեղեկանքի հատկացմանն ու կիրառմանն առնչվող հարցեր, ՀՀ կառավարության 2007 թ. մարտի 1-ի թիվ 369-Ն որոշման կատարման ընթացքը, առաջացած դժվարություններն ու խնդիրները:

Ծրագրի նպատակն է՝ պաշտպանել քաղաքացիների խախտված իրավունքները՝ նպաստելով սահմանադրական արդարադատության նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն իրականացվում է Քառամթեր-փարթի ինքնընթացի ԸՇԴ և «ՀԿ Կենտրոն» ԲՀԶ ՀԿ/Խրուսիսային մասնաճյուղի աջակցությամբ:

Տվյալ ծրագրի և կազմակերպության կողմից իրականացվող այլ ծրագրերի մասին մանրամասն տեղեկություններ կարող եք գտնել ՀՄԻԿ կայքէջում: www.acrpc.am:

Արայիկ ՊԱՊԻՅԱՆ

Թերթը իրատարակվում է երկրպակամ միության ֆինանսական օժանդակությամբ: Երկչաբաբերթի բովանդակության համար պատասխանատվությունը կրում է միայն Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոնը: Թերթը ոչ մի դեպքում չի կարող դիտվել որպես եկրոպական միության դիրքորոշումն արտացոլող փաստաթուղթ:

Հրատարակության 9 տարի
Հիմնադիր և իրատարակիչ
Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն
ՀՀ, 2002 թ. Վանածոր, Հիրակցու 1-ին նրք., թիվ 2
Դեռ: +374 (322) 2-29-87
Ֆաքս: +374 (322) 4-47-81
Էլ. փոստ՝ info@acrpc.am Համացանցի էջ՝
www.acrpc.am

Գլխավոր խմբագիր՝ Հրաչյա ՍԱՐԻՈՒՍԱՆ
Խմբագիր՝ Լուսինե ՄԱՅԿԱՅԱՆ
Համակարգչային ձևավորող՝ Նարինե ԱՉԱՐՅԱՆ
Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Մեղքերումներ անելիս կամ արտատպելիս հղումը «Իրավական մշակույթ» պարտավոր է:
Հրատարակումների բովանդակությունը կարող է չհամապատասխանել իրատարակչության կարծիքին:

Ճակարկ՝ 2 տպագրական մասով:
Ստորագրված է տպագրության 2007 թ.06.29:
Տպագրվել է 2007:
Տպագրվել է «Չափազանց» հրատարակչատանը:
Իրավական մշակույթ
Legal Culture
Правовая культура
Տարածվում է անվճար